HAL
open science

- .

Arestakes Simavoryan

To cite this version:

Arestakes Simavoryan. - . . PROCEEDINGS OF THE INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE ON “CONTEMPORARY PROBLEMS OF MANAGEMENT”, Public Administration Academy of the Republic of Armenia, 2017, Yerevan, Armenia. pp.397-405. hal-03240107

HAL Id: hal-03240107

https://hal.science/hal-03240107

Submitted on 27 May 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L’archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d’enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ԱՐԵՍՏԱԿԵՍ ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
տարածաշրջանային հետազոտությունների
կենտրոնի գիտաշխատող

ԹՈՒՐՔԻԱ-ԻՐԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիա-Իրան բազմակողմ հարաբերությունները և երկու երկրների ներքաքաղաքական զարգացումները տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից և ՀՀ-ի համարկարևոր նշանակություն ունեն: Հաշվի առնելով մոտ մեկ դարի ընթացքում տարածաշրջանում սկիզբ առած մարտահրավերները և երկուստեք տեղի ունեցած քաղաքական բնույթի փոփոխությունները, որոնք ընդհանուր առմամբ ազդում էին երկու երկրների միջպետական հարաբերությունների վրա՝ կարելի է փաստել, որ դրանք եղել են փխրուն, բայց միևնույն ժամանակ՝ հավասարակշռված:

Հիմնաբառեր. Իրան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Հարավային Կովկաս, տարածաշրջան, Իրանի միջուկային խնդիր, տնտեսական հարաբերություններ:

Թուրքիա-Իրան բազմակողմ հարաբերությունները և երկու երկրների ներքաքաղաքական զարգացումները տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից և ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունեն: Հաշվի առնելով մոտ մեկ դարի ընթացքում տարածաշրջանում սկիզբ առած մարտահրավերները և երկուստեք տեղի ունեցած քաղաքական բնույթի փոփոխությունները, որոնք ընդհանուր առմամբ ազդում էին երկու երկրների միջպետական հարաբերությունների վրա՝ կարելի է փաստել, որ դրանք եղել են փխրուն, բայց միևնույն ժամանակ՝ հավասարակշռված: Այս տեսանկյունից թուրք-իրանական հարաբերությունները պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջափուլի.

- *առաջին (1926-1979 թթ.)*-բարիդրացիական հարաբերությունների շրջան, երբ երկու երկրների միջև հարաբերությունները կրում էին դինամիկ զարգացում,
- *երկրորդ (1979-1991 թթ.)*-հարաբերությունների վատթարացման շրջան,
- *երրորդ (1991-ից առ այսօր)* երկու երկրների միջև տնտեսական և տարածաշրջանային քաղաքականության ակտիվացման՝ «զգուշավոր գործընկերության» շրջան:

Այդ հարաբերություններին տրվել են այլ գնահատականներ ևս՝ «ասիմետրիկ հարաբերություններ» [1], «սահմանափակ հարաբերություններ» [2], հարաբերություններ՝ «հավերժ» [3] մրցակցության պայմաններում: Թուրք-իրանական հարաբերություններն որակապես նոր փուլ թևակոխեցին 2002 թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո, որը արտաքին քաղաքականությունում որդեգրեց «զրո խնդիրներ հարևանների հետ» սկզբունքը: Այն են թադրում էր, առավելագույն քաղաքական և տնտեսական համագործակցություն հարևան երկրների հետ, դառնալ իբրև տարածաշրջանային դերակատար-առաջնորդ՝ հիմնախնդիրների կարգավորման գործում ստանձնելով «հաշտարարի» և «միջնորդի» դերը: Ելնելով, որ երկու երկրներն էլ ձգտում են դառնալ տարածաշրջանային առաջնորդներ (Իրանում տարածաշրջանում առաջնորդ դառնալու նպատակադրումն ամրագրված է **«Իրանի Իսլամական Հանրապետության հեռանկարը 1404թ. (2025թ.) հորիզոնում»** փաստաթղթում) [4], ապա նրանց հարաբերություններում առկա են ինչպես մրցակցության, այնպես էլ համագործակցության տարրեր: Այդ տարրերը դրսևորվեցին հատկապես տարածաշրջանային մակարդակով կուտակված բազմաթիվ հիմնախնդիրներում. իրանյան միջուկային ծրագիր, արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձություններ, իրաքյան պատերազմ, քրդականխնդիր, Իրանի և Թուրքիայի կախվածությունը էներգետիկ շուկաներից ու աղբյուրներից և այլն:

2003-2015 թթ. ընկած ժամանակահատվածում հարաբերությունների վրա ազդեցին մի շարք գործոններ, որոնք էլ ընդհանուր առմամբ պայմանավորեցին երկկողմ հարաբերությունների բնույթը: Այդ գործոններն են՝

- *ԱՄՆ ներխուժումը Իրաք (2003թ.):* Ի հեճուկս ԱՄՆ կողմից իրականացվող ճնշումներին՝ Թուրքիայի խորհրդարանը մերժեց ԱՄՆ հայցը՝ թույլ չտալով օգտագործել իր ցամաքային տարածքը պատերազմական գործողությունների նպատակով: Իրանական կողմը դրական արձագանքեց թուրքական որոշմանը: ԱՄՆ գործողությունները Իրաքում, և այդ երկրի ապագայի հետ կապված հիմնախնդիրներն առիթ դարձան Անկարայի և Թեհրանի մերձեցմանը:
- *Քրդական հարց:* Մինչև 1991 թ. քրդական հարցում երկու երկրների մոտեցումները հակոտնյա էին: Քրդական հարցը մտահոգիչ դարձավ, երբ 1992 թ. Իրաքում քրդերը փաստացի ձեռք բերեցին ինքնուրույնություն: Սկսած 1992-ից երկու երկրները համակարգված քաղաքականություն են տանում Հյուսիսային Իրաքում անկախ քրդական պետության ստեղծման հնարավորությունների չեզոքացման գործում, որն իր արատացոլումը գտավ 1993 թ. ստորագրված եռակողմ (Թուրքիա, Իրան և Իրաք) պայ-

մանագրում: Սրանով հանդերձ քրդական ազգային շարժման շրջանակներում Թեհրանը և Անկարան իրենց «խաղադրույքը» դրեցին երկու տարբեր կուսակցությունների վրա: Թուրքերն սկսեցին աջակցել Մասութ Բարզանիի «Քրդստանի դեմոկրատական կուսակցությանը», իրանցիները՝ Ջալալ Թալաբանիի «Քրդստանի հայրենասերների միության»-ը [5]: ԱՄՆ Իրաք ներխուժման հետևանքով կրկին սրվեց այդ երկրում քրդական հարցը, որը խթանեց ռազմաքաղաքական համագործակցությունը Թեհրանի և Անկարայի միջև՝ ՔԲԿ դեմ պայքարում:

- *Իսրայելական գործոնը:* Երկու երկրների մերձեցման գործոններից մեկն էր նաև Թուրքիայի հակահիսրայելական դիրքորշումը: Այն իր արտացոլումը գտավ հատկապես 2010-ին, երբ իսրայելցի զինվորականները գրավեցին «Ազատության նավատորմի» մեջ մտնող «Մավի Մարմարա» նավը, որի հետևանքով սպանվեցին Թուրքիայի քաղաքացիներ: Իսրայելը հրաժարվեց պաշտոնապես ներողություն խնդրել Թուրքիայից, որին հաջորդեց Թուրքիայի հայտարարությունը՝ երեք իսրայելցի դիվանագետներին Անկարայից վտարելու, ինչպես նաև Իսրայելի հետ բոլոր ռազմական և տնտեսական հարաբերությունների սառեցման մասին: Միջադեպի հետ կապված արձագանքեց նաև Իրանի նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեջաթը՝ պահանջելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից ընդդեմ Իսրայելի գործողությունների ընդունել «խիստ» բանաձև: Վեց տարի շարունակվող Թուրքիա-Իսրայել վատթարացած հարաբերությունները կարծես թե սկսում են վերակենդանանալ և առաջիկայում սպասվում են երկկողմ պետական բարձր մակարդակի հանդիպումներ: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ միջադեպը Թուրքիայի կողմից օգտագործվեց մարտավարական նկատառումներով, մասնավորապես, Իսրայելի հանդեպ ոչ բարյացակամ դիրքորշում ունեցող տարածաշրջանի իսլամական երկրներին իր առանցքի շուրջ համախմբելու համար: Սակայն դրան հաջորդած Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները, ցույց տվեցին այդ քաղաքականության սնանկությունը: Այս համատեքստում, Թուրքիա-Իսրայել հարաբերությունների հնարավոր կարգավորումը դժվար թե դրական արձագանք գտնի Իրանի քաղաքական վերնախավի մոտ:

- *Իրանի միջուկային խնդիրը և Թուրքիան:* Իրանի միջուկային խնդիրը մշտապես անհանգստացրել է Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը, հատկապես հետևյալ տեսանկյունից, որ «միջուկային լծակը» հնարավորություն կտա Իրանին դառնալ տարածաշրջանային առաջնորդ: ԱՄՆ զորքերի Իրաք ներխուժումից հետո, թուրքական իշխանությունները մտահոգված էին, որ միջազգային ճնշումները Իրանի վրա՝ միջուկային ծրագրի շրջանակներում կարող է տարածաշրջանում հակամարտության նոր օջախ ծնել՝ ներքաշելով նաև Թուրքիային: Թուրքիան

փորձեց իր «ավանդն» ունենալ Իրանի միջուկային խնդրի հանգուցալուծման գործում, հայտարարելով՝ թուրք-բրազիլիական նախաձեռնության մասին: Թեհրանի և Արևմուտքի միջև միջնորդություն կատարելու նպատակով երկու երկրները պետք է մշակեին այլընտրանքային ծրագիր՝ Իրանի միջուկային խնդրի լուծման գործում: 2010 թ. մայիսի 17-ին Իրանի, Բրազիլիայի և Թուրքիայի միջև Թեհրանում միջուկային վառելիքի փոխանակման շուրջ ստորագրվեց համաձայնագիր: Սակայն, մի շարք գործոններով պայմանավորված՝ համաձայնագրի շրջանակներում ձեռքբերված պայմանավորվածությունները առարկայական չդարձան: Համաձայնագիրը սառը ընդունելության արժանացավ առաջատար տերությունների կողմից, քանի որ այն չէր ենթադրում ուրանի հարստացման կասեցում, այլ լայն հնարավորություն էր տալիս ստեղծելու միջուկային զենք:

Չնայած որ 2003-2011 թթ. ընթացքում թուրք-իրանական հարաբերություններում նկատելի էր ջերմացում, տարածաշրջանային կարևորագույն հարցերի շուրջ կար մասնակի փոխըմբռնում և մոտեցումների համընկնում, այնուամենայնիվ աշխահաքաղաքական պայքարը Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում բացահայտեց կողմերի հակասությունները:ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասը որպես ռազմավարական նշանակության տարածաշրջան հայտնվեց ինչպես գերտերությունների (ՌԴ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան), այնպես էլ տարածաշրջանային տերությունների (Թուրքիա, Իրան) ուշադրության կենտրոնում: Հարավային Կովկասի հետ կապված Իրանն հետապնդում էր իր ռազմավարական նպատակները: Նախ Իրանը, ունենալով շարունակական խնդիր՝ անընդհատ հակասությունների մեջ գտնվելով Արևմուտքի հետ, հարավկովկասյան տարածաշրջանում ձգտում է հնարավորինս թույլ չտալ ԱՄՆ-ի, Իսրայելի և Թուրքիայի դիրքերի ամրապնդում: Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի երեք հանրապետությունների հետ կապված հարաբերություններին, ապա Իրանը ունի առաջնահերթություններ, որի վրա էլ ձևավորվել են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունները:

Թուրքիան, ԽՍՀՄ փլուզումից ի վեր փորձում է կանխել Իրանի դերակատարության աճը տարածաշրջանում: Դա ցայտուն արտահայտվեց, երբ Հարավային Կովկասի անվտանգության համակարգի հետ կապված Թուրքիան մի քանի անգամ առաջարկեց ստեղծել համապատասխան կառույցներ: Մասնավորապես Անկարան 2008 թ. նախաձեռնում էր ստեղծել «Կովկասի կայունության և անվտանգության պլատֆորմ»՝ 2+3 (Թուրքիա-Ռուսաստան+Հայաստան-Վրաստան-Ադրբեջան) ձևաչափով: Համագործակցության այս ձևաչափում Թուրքիան ուղղակի անտեսեց

Իրանին՝ փորձելով խախտել ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում:

Երկու երկրների միջև եղած հակասություններն ավելի վառ արտահայտվեցին սիրիական հակամարտության ընթացքում. կողմերը տարբեր մոտեցումներ որդեգրեցին սիրիական ճգնաժամի նկատմամբ: Նշենք, որ առ այսօր շարունակվող հակամարտության կարգավորման ուղղությամբ ներգրավված են մի քանի պետություններ և կազմակերպություններ (Ռուսաստան, ԱՄՆ, ԵՄ, Թուրքիա, Իրան): Մասնավորապես՝ Ռուսաստան-Իրան-Թուրքիա եռյակը, որոնք ստանձնել են Սիրիայում զինադադարի երաշխավորի դերը, աշխատում են ճգնաժամի հանգուցալուծման ուղղությամբ: Ակնհայտ է, որ Սիրիայի ապագայի հետ կապված Թուրքիան և Իրանը ունեն իրենց ռազմավարական շահերը, ինչը դժվարացնում է կարգավորման գործընթացը:

Չնայած տարածաշրջանային հիմնախնդիրները երկու երկրների հարաբերություններում տարաձայնությունների և հակասությունների պատճառ են դարձել, սակայն 2002-ից սկսած (ԱԶԿ իշխանության գալուց ի վեր) առևտրատնտեսական հարաբերություններում գրանցվել է բավականին տպավորիչ արդյունքներ.եթե 2002թ. երկկողմ առևտրաշրջանառությունը կազմում էր 2,4 մլրդ., ապա 2012թ. այն հասավ 22 մլրդ. դոլարի: Ճիշտ է, 2013-2015 թթ. ընկած ժամանակահատվածում նկատվեց անկում [6], սակայն թուրքական կողմը ձգտում է առաջիկա տարիներին (մինչև 2023 թ.) այն հասցնել մինչև 100 միլիարդի:

Երկու երկրների տնտեսական հարաբերություններում արդիական են մնում էներգետիկ և տրանսպորտային հարցերը, ինչպես նաև համատեղ ներդրումային նախագծերի իրականացման հնարավորությունները: Թուրքիան իրանական գազի, նավթի և էլեկտրականության ամենախոշոր սպառողն է: Այս տեսանկյունից երկու երկրների համար էլ մեծ կարևորություն է ստանում էներգետիկ համագործակցությունը: 2015 թ. դրությամբ Իրանը Թուրքիա գազ արտահանողների թվում երկրորդ պետություն է Ռուսաստանից հետո մատակարարելով տարեկան շուրջ 10 միլիարդ խորանարդ մետր գազ, որն իրականացվում է իր ողջ հզորությամբ չօգտագործվող *Թավրիզ-Էրզրում-Անկարա* խողովակաշարով:

Թուրքիան այլ ներկրողների հետ համեմատած իրանական գազի դիմաց բավականին թանկ է վճարում (431 դոլար), ինչը տարաձայնություններ առիթ հանդիսացավ երկու երկրների հարաբերություններում: Ի վերջո՝ Անկարայի և Թեհրանի միջև սկիզբ առած «գազային հակամարտությունը» Թուրքիան տեղափոխեց միջազգային հարթակ, փորձելով՝ խնդիրը կարգավորել միջազգային արբիտրաժային դատարանի միջոցով: Համաձայն վերջինիս որոշման Իրանը պարտավոր էր նվազեցնել 2011-2015 թթ.

Թուրքիա արտահանած գազի գինը 25 %-ով՝ վճարելով Անկարային շուրջ 1,9 մլրդ դոլարի փոխհատուցում: Իրանը դրան արձագանքեց, նշելով, որ կվճարի ոչ թե գումարով, այլ «գազային պայմանագրերի միջոցով», միաժամանակ չնվազեցնելով գազի գինը 25%-ով, ինչպես որ ցանկանում էր Թուրքիան, այլ 12.5%-ով [7]: Միևնույն ժամանակ Թուրքիան հայտարարում է, որ պատրաստ է ավելացնել գազի ներկրման ծավալը՝ Իրանի կողմից հարմար գնի առաջարկման դեպքում: Սակայն Իրանը դեռևս տեխնիկապես ի վիճակի չէ ավելացնել արտահանումը, քանի որ դրա համար պահանջվում է արդիականացնել գազային ենթակառուցվածքները, իսկ այդ նպատակով կպահանջվի մոտ 10 տարի:

Թուրքիան բացի գազից և նավթից՝ Իրանից ստանում է նաև էլեկտրականություն: Թուրքիայի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2015 թ. Թուրքիան Իրանից ստացել է 1,370 միլիարդ կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա: Այժմ Թուրքիան՝ Իրանի միջև երկկողմ էլեկտրաէներգիայի ապահովման նպատակով Վանի նահանգում կառուցում է 600 մեգավատ հզորությամբ էլեկտրակայան, որը շահագործման կհանձնվի 2018 թ. [8]: Ինչ վերաբերում է երկկողմ ներդումներին, ապա թուրքական կողմը 1996-2014 թթ. ընթացքում արդեն Իրանի տարբեր ոլորտներում կատարել է մոտ 1,3 միլիարդ դոլարի ներդրում, իսկ ահա իրանական ներդրումները Թուրքիայում՝ 2002-2014 թթ. կազմել է 101 միլիոն դոլար [9]: Առաջիկայում սպասվում են նոր ներդրումներ, մասնավորապես թուրքական ընկերությունները պլանավորում են Մակուի ազատ առևտրա-արդյունաբերական գոտում կառուցել 6 մլրդ. դոլար արժողությամբ նավթաքիմիական գործարան [10]: Բացի դրանից թուրք գործարարները պատրաստվում ներդրումներ կատարել նաև արդյունաբերական տարբեր ճյուղերերում, բարձրակարգ հյուրանոցային համալիրների կառուցման գործում և այլն:

Ընդհանուր առմամբ վերջին տասնամյակում Անկարան և Թեհրանը՝ երկկողմ ստորագրված պայմանագրերի շրջանակներում մեծ աշխատանք են կատարել առևտրային պայմանների և դրանց առնչվող իրավական հիմքերի բյուրեղացման, հարկերի և սակագների նվազեցման, մաքսակետերի արդիականացման, տնտեսությանը վերաբերող սուր խնդիրների հարթեցման ուղղությամբ:

Եզրակացություններ

- Այսպիսով կարելի նշել, որ երկկողմ հարաբերություններն առավել ամբողջական արտացոլվում են ոչ միայն այդ երկրների փոխգործակցությամբ, այլև նրանց հետ կապված տարածաշրջանային հրատապ խնդիրներով. մասնավորապես՝ 2003-2015 թվականներին Իրանի հետ մերձեցման քաղաքականությունը՝ տարածաշրջանային հիմնախնդիրների կարգավորման համատեքստում (միջուկային խնդիր, քրդական ու իրաքյան խնդիրներ և այլն), սիրիական հակամարտության կարգավորմանն ուղղված՝ իրանականից տարբերվող, հակադիր դիրքորշման քաղաքականության որդեգրումը, և երկկողմ տնտեսական համագործակցությունից առավելագույն օգուտներ քաղելը՝ Իրանի ուղղությամբ Թուրքիայի վարած քաղաքականության հիմնական սկզբունքներն էին:
- Ելնելով Թուրքիայի նախկին արտգործնախարար, արտաքին քաղաքականության գլխավոր ճարտարապետ համարվող Ահմեթ Դավութօղլուի այն տեսությունից, որ Եգիպտոս-Թուրքիա-Իրան «ռազմավարական եռանկյունին» կարող է միջազգային հավասարակշռություն հաստատել Մերձավոր Արևելքում՝ թուրքական փորձագիտական դաշտում առաջ էր քաշվում այն վարկածը, թե «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո Անկարան Թեհրանին չի դիտարկի որպես մրցակից, այլ ավելի շատ տարածաշրջանային մարտահրավերների լուծման համախոհ-գործընկեր: Այդուհանդերձ ըստ «չափավոր իսլամական» մոդել ներկայացնող Թուրքիայի համար Իրանը որոշ առումներով մրցակից է, ինչը սակայն չի ենթադրում Թեհրանի հետ հարաբերությունների վատթարացում, այլ հակառակը՝ դրանց պահպանմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականություն, ինչն էլ երկու պետությունների հարաբերությունները վերածում է «զգուշավոր գործընկերության»:
- Առաջիկա տարիներին երկու երկրների հարաբերություններում արդիական է մնալու առաջին հերթին սիրիական հակամարտության հանգուցալուծման հարցը, որտեղ կողմերը ունեն հակադիր դիրքորշումներ, և այժմ Ռուսաստանի հետ միասին փորձում են փոխհամաձայնության գալ իրենց մոտեցումներում:
- Հարավային Կովկասի երկրների հետ Թուրքիայի և Իրանի փոխգործակցությունը պայմանավորված է երկկողմ և բազմակողմ հարաբերությունների որակներից բխող բազմաթիվ գործոններով:
- Երկկողմ տնտեսական կապերը կարծում ենք էլ ավելի կխորանան, քանի որ մի կողմից Թուրքիան սեփական տնտեսության զարգացման համար շատ է զգում իրանական էներգակիրների կարիքը, մյուս կողմից այդ կապերով փորձ է արվում նվազեցնել քաղաքական ճգնաժամերում ի հայտ եկող ռիսկերը: Այս ամենով հանդերձ գազի գնի և *Թավրիզ-Էրզրում-*

Անկարա գազատարի անվտանգության հետ կապված ժամանակ առ ժամանակ առաջանալու են տարածայնություններ:

- Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական էներգակիրների փոխադրման հարցը մնում է երկու երկրների օրակարգում, սակայն կարծում ենք, որ հարցի հանգուցալուծումը ոչ միայն կախված է երկու երկրներից. այն ավելի շուտ կարող է լուծում ստանալ աշխարհաքաղաքական որոշման շրջանակներում: Ինչ վերաբերում է Իրան-Հայաստան-Վրաստան տարբերակին՝ որպես իրանական էներգակիրների արտահանման հնարավոր ճանապարհ, ապա այս առումով, այն շարունակում է այլընտրանք մնալ թուրքական ուղուն: Ավելին հայկական ուղին շահեկանորեն տարբերվում է անվտանգության ավելի բարձր աստիճանով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ***E. Ersoy,***Türkiye-İran İlişkilerinin Politik Ekonomisi: Asimetrik İşbirliği, «Analist» dergisi, 2014, temmuz, Sayı 7, s. 8

2. ***Ավագյան Ա.,*** Թուրքիա-Իրան հարաբերությունները ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում, Տարածաշրջանային անվտանգություն. Թուրքիա,Աշխատանքային տետրեր, «Հայկական բանակ» ռազմագիտականհանդեսիհավելված 3-4 (7-8), 2008թ, էջ 102

3. ***Калишевский М.,*** Турция - Иран: «Вечное» соперничество?, http://www.fergananews.com/articles/7890, 30.09.2013

4. http://rc.majlis.ir/fa/law/show/132295

5. ***Александров А.,*** Об ирано-турецких отношениях на современном этапе, http://www.iimes.ru/?p=24340

6. Ambargo Sonrası İran Ekonomik ve Ticari Etki Analizi, Haziran, 2016, s. 17.

7. Türkiye, İran'a açtığı doğalgaz davasını kazandı, Sabah, 02.02.2016

8. На востоке Турции строят мощную электростанцию, www.aa.com.tr

9. ***Boylu E.,Çangal O.,*** Yabancılara Türkçe Öğretiminde Dil İhtiyaç Analizi: İran Örneği, International Journal of Language Academy, Volume 2/4 Winter, 2014 p. 147

10. Турецкие инвесторы планируют построить нефтехимический завод в Иране за $6 млрд, https://rns.online/energy/-Turetskie-investori-planiruyut-postroit-neftehimicheskii-zavod-v-Irane-za-6-mlrd--news-2015-12-01/

АРЕСТАКЕС СИМАВОРЯН
Научный сотрудник Центра региональных исследований Академии государственного управления РА

ТУРЦИЯ-ИРАН: ПОЛИТИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

Разносторонние межгосударственные отношения Турции и Ирана, а также внутриполитические процессы в них, имеют особую важность для Республики Армения, в том числе по части региональной безопасности на Южном Кавказе.Принимая во внимание вызовы, возникшие в регионе в течение последнего столетия, а также политические изменения в каждой из них – все это в целом повлияло на межгосударственные отношения двух стран. В то же время отметим, что сущность иранотурецких отношений можно определить как “хрупкие”, которые, в то же время, являются достаточно сбалансированными.

Ключевые слова: Иран, Турция, Ближний Восток, Южный Кавказ, регион, ядерная проблема Ирана, экономические отношения.

ARESTAKES SIMAVORYAN
Research Fellow at the Center for Regional Studies at Public Administration Academy of the RA

TURKEY-IRAN: POLITICAL AND ECONOMIC RELATIONS

Turkey-Iran multilateral relations and the internal political developments of the two countries are of crucial importance for the regional security and for Armenia. Taking into account the challenges that have emerged in the region over the course of the last century and the political changes, that generally affect the interstate relations of the two countries, it can be stated that they are fragile, but at the same time balanced.

Keywords: Iran, Turkey, Middle East, South Caucasus, region, Iran's nuclear issue, economic relations.